

ԿԱՐԻՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻՆ ՆԱԵՎ ԳՐԱԲԱՐՆ Է*

Բանալի բառեր: Արցախյան շարժում, մայրենի լեզու, գրաբար, հնչյունաբանություն, այբուբեն, բառագիտություն, ձևաբանություն, Գողթան երգեր, ուսուցում, կրթական ռազմավարություն:

Հգոր, ազատ ու անկախ հայրենիք ունենալն արցախահայության նվիրական երազանքն է, ազատագրական պայքարի նպատակը: 1988 թվականի փետրվարին ազգովին սկսեցինք և 1994 թվականի մայիսի 9-ին հաղթականորեն ավարտեցինք այդ վեհ նպատակին ուղղված մեր առաքելության առաջին փուլը. ազատագրվեց Արցախը, ստեղծվեց հայկական երկրորդ անկախ պետությունը՝ Արցախի Հանրապետությունը: Այն կարողանում է դիմակայել ժամանակաշրջանի մարտահրավերներին, թշնամի հարևանի նկրտումներին՝ շնորհիվ կայացած բանալի, ժողովրդի անձնավիրության, հայրենասիրության, անկոտրուկ կամքի: Մեր պետության այս օղակը հուսալի ձեռքերում է: Բայց կա մի այլ օղակ ևս, որ պակաս կարևոր չէ հզոր ու անպարտ հայրենիք կերտելու մեր առաքելության համար: Դա մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործն է, նոր մարդու՝ ազատ ու անկախ Արցախի Հանրապետության քաղաքացու ձևավորումը:

Երկարատև հակամարտությունը (իսկ մեր պայքարը հարևան ժողովրդի հետ, ցավոք, այդպիսին է դարձել) ինչքան էլ հաղթանակով ավարտվի, ավերածություններ, մարդկային անդառնալի կորուստներ է բերում. ընդ որում, զոհվում են լավագույնները, նվիրյալները, որոնք միշտ առաջնագծում են...

Այսօր մեր պայքարը խրամատներից ձգվել է դեպի մի այլ հարթակ՝ քաղաքականության, գիտության, մշակույթի, դիվանագիտության դաշտ: Այս ոլորտում, ինչպես վկայում է մեր դարավոր պայքարի պատմությունը, մենք միշտ զիջել ենք արևելյան ճարտասանությանը, փորձել ենք դիվանագիտական մարտահրավերներին դիմակայել թղթե շերտիով և ձեռքներիցս բաց ենք թողել արյունով նվաճածն անգամ:

Արցախյան ազատագրական պայքարի արդյունքում այլ է պատկերը: Մենք մեր թիկունքում ունենք երկու հայկական պետություն, նվիրված Սփյուռք, աշխարհասփյուռ հայություն, մեր ծայնը լսվում է միջազգային ատյաններում, մեր բողոքը քննարկվում է, արցախահայ բնակչությունը համայն հայության ուշադրության կենտրոնում է: Սա հուսադրում է, բայց և պարտավորեցնում՝ արդարացնել բոլորի բոլոր ջանքերը: Մի առիթով հայտնի լեզվաբան Ս. Աբրահամյանը գրել է. «Հայրենիքի ծայն»-ում «ճանաչենք, սիրենք, պահպանենք» վերնագրով հոդված էր հրապարակվել, որը վերաբերում էր մայրենի լեզվի պահպանմանը

*Հոդվածն ընդունվել է 20.04.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի լեզուների ամբիոնը:

սփյուռքում: «Պահպանելու համար պետք է սիրել, սիրելու համար պետք է ճանաչել» պահանջն ու տրամաբանությունը, որ արտահայտված են մայրենի լեզվի առիթով, ըստ էության վերաբերում են ազգային բոլոր արժեքներին՝ հոգևոր, մշակութային, նյութական, այլև դպրոցին, գիտությանը և այլն»:(1) Այս առումով մեծ գործ ունենք կատարելու մայրենի լեզվի մասնագետներս: Արցախահայությունը երկար ժամանակ կտրված է եղել մայր Յայաստանից: Մեզ հաճախ այնքան էլ հասու չէին գրական հայերենի ռադիոհեռուստահոլորդությունները, կարոտ էինք մեր ազգի մեծերի կենդանի խոսքին: Եվ արդյունքում Արցախահայության գրական խոսքում իշխող դարձավ բարբառը, ունենալով հարուստ բառապաշար անգամ՝ խոսում էինք բարբառային առոգանությամբ, դժվարանում էինք անկաշկանդ արտահայտվել մեր մայրենի լեզվով:

Այսօր Արցախի Հանրապետությունը ՀՀ-ի հետ գտնվում է նույն կրթական դաշտում. նույնն են ուսումնառության ծրագրերը, թեմատիկ, օրացուցային պլանները, դասագրքերը, կրթադաստիարակչական ռազմավարությունը, բայց միայն դրանցով առաջնորդվելով՝ չի վերացվի այն անդունդը, որ ստեղծվել է Արցախում խորհրդային 70 տարիների ընթացքում: Մեր բառապաշարը լցված է օտարաբանություններով՝ ադրբեջանա-թուրքական, լավագույն դեպքում՝ ռուսական բառերով, արտահայտություններով: Մաքրենք մեր լեզուն այդ մոլախոտերից: Դրանք փոխարինենք մեսրոպաշունչ հայերենով, որը մեր գոյության երաշխիքն է, հիրավի: Դրա համար պետք է վերադառնանք մեր արմատներին: Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս, ո՞ւր ենք գնում և ինչո՞ւ հարցերի պատասխանը նախ և առաջ պետք է փնտրել ոսկեղենիկ հայերենի՝ գրաբարի ուսումնասիրության մեջ: Ժամանակակից հայոց լեզվի դասավանդմանը զուգահեռ աշակերտներին պետք է տեղեկություններ տալ գրաբարի մասին: Ցույց տալ նրա դերն ու նշանակությունը հայերիս կյանքում, հայոց լեզվի գոյատևման, զարգացման, հարստացման գործում: Այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ է պահանջատեր լինել ժողովրդի գիտական, մշակութային, ազգագրական դարավոր ձեռքբերումներին: 21-րդ տեղեկատվական դարում առանձնահատուկ կարևորություն է ստացել հին մատյանների, արձանագրությունների, հուշարձանների, գրաբարյան արխիվի ուսումնասիրությունը: Այս առումով պարտադիր է դառնում հին հայերենի իմացությունը: Այն պետք է ուսուցանել՝ համադրելով մեր լեզվի զարգացման գրաբարյան և արդի ժամանակաշրջանի լեզվական համարժեք իրողությունները: Հանրակրթական դպրոցի 5-րդ, 6-րդ դասարանների հայերենի դասագրքերը կոչվում են «Մայրենի»: Եվ ոչ՝ «Հայոց լեզուն»: Ըստ իս՝ այն մեծ խորհուրդ ունի. հայոց լեզուն (իմա՝ հայերի լեզուն) կարող են ուսումնասիրել նաև ոչ հայերը, դա սովորական լեզու է աշխարհում գոյություն ունեցող բազմաթիվ լեզուների շարքում, որը կարող է ուսումնասիրել ցանկացած ոք: Իսկ մայրենին, մեր լեզուն է, հայ մայրերի լեզուն, որ փոխանցվել է սերնդեսերունդ: Ինչպես ասում է Ավ. Իսահակյանը. «Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ հասկանում, սովորում, հիշում»:

Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի «Մայրենին» բացվում է մի բազմիմաստ հարցադրումով. «Մտածե՞լ ես , թե ինչո՞ւ ենք մեր լեզուն կոչում մայրենի»:(2) Ժամանակակից հայերենն իր բոլոր բաժիններով՝ հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն ու շարահյուսություն, սերտորեն առնչակցվում է գրաբարին: Դրանք ուսուցանելիս միշտ պետք է զուգահեռներ անցկացնել հայերենի զարգացման այդ երկու շրջանների լեզվական համարժեք իրարկու-

թյունների միջև, համադրել դրանք, նշել ընդհանրությունները, ընդգծել տարբերությունները:

Աշակերտի ծանոթությունը գրաբարին պետք է սկսել հայերենի հնչյունական համակարգն ուսուցանելիս, երբ խոսք է գնում տառի և հնչյունի, հայերենի այբուբենի մասին: Այբուբեն բառը կազմված է հայերենի առաջին երկու տառերի ա (այբ) և բ (բեն) անվանումների միացումից: Գրաբարի այբուբենն ունի 36 տառ, որովհետև հայոց լեզուն ունի 36 հնչյուն, իսկ Մ. Մաշտոցը յուրաքանչյուր հնչյունի համար ստեղծել է մեկ տառ: Ժամանակակից այբուբենի վերջին երկու տառերը (օ և ֆ) ավելացվել են, երբ հին հայերենը կենդանի, խոսակցական լեզու չէր, այլ գրաբար: Օ-ն օգտագործում ենք բառասկզբի և բառամիջի համապատասխան հնչյունները տարբերակելու համար, իսկ ֆ-ն՝ օտար, փոխառյալ բառերը գրելու համար, որովհետև հայերենում չկա ֆ հնչյուն:(3)

Մ. Մաշտոցը հայերենի ամեն մի տառին տվել է առանձին անվանում՝ այբ, բեն, գիմ, դա...: Դրանք անգիր սովորելը յուրաքանչյուր աշակերտի համար պարտադիր է: Այբուբենը մտապահելը դյուրին է դարձնում տառերի համահունչ դասավորությունը, հերթականության երաժշտականությունը: Տառերի գրության ձևը, դասավորությունը, արտասանությունը, թվային արժեքը ցայսօր նույնն են: Փոփոխություններ կատարվել են առանձին հնչյունների, հնչյունակապակցությունների գրության և արտասանության մեջ: Դրանց արդյունքում արդի հայերենում ունենք հանուն, հօգուտ, հոտնկայս, հանձին(ս) և նման բառեր, որոնց ստուգաբանությունը, ուղղագրությունն ու գործածությունը առնչակցվում են գրաբարին: (4)

«3 ձայնակապի ուղղագրությունը և ուղղախոսությունը» թեման անցնելիս (5) պետք է զուգահեռներ անցկացնել գրաբարի և ժամանակակից հայերենի նույն իրողությունների միջև: Հին հայերենում բառավերջում ա-ից և ո-ից հետո գրվում էր յ, բայց չէր արտասանվում: Օրինակ՝ տղայ, արքայ, երեկոյ և այլն: Ժամանակակից հայերենում յ ձայնակապը գրեթե բոլոր ձայնավորների միջև արտասանվում է, բայց գրվում է ա-ից և ո-ից հետո: Օրինակ՝ արքայություն, տղայական, երեկոյան և այլն:

Հին հայերենին անդրադառնալու անհրաժեշտություն է զգացվում նաև վ – ֆ բաղաձայնների ուղղագրությունն ու արտասանությունը բացատրելիս: Աշակերտների ուշադրությունը պետք է դարձնել այն բանի վրա, որ դասագրքի վարժություններում ֆ ունեցող բոլոր բառերը փոխառություններ են՝ ֆիզիկա, Աֆրիկա, ասֆալտ, Աֆղանստան: (6) Լավ կլինի աշակերտների հետ վերհիշել. հայերենի հնչյունական համակարգը չունի ֆ հնչյունը, մեսրոպյան այբուբենը՝ ֆ տառը և հայերենի բառապաշարում ֆ ունեցող բոլոր բառերը օտար բառեր են: Դա կօգնի աշակերտներին կատարելու «Մայրենի 5» դասագրքի 104-րդ էջի թ. 3 վարժությունը. «Գրիր Ֆ կամ Վ տառով սկսվող երկու – երեք պետության անուն՝ նշելով մայրաքաղաքները»:

Նույն տեսանկյունով պետք է բացատրել Եվ(և)–ի ուղղագրությունն ու ուղղախոսությունը: Թեման սկսվում է «Հայերենում մեծատառ և չկա» նախադասությամբ: (7) Ինչո՞ւ. հռետորական այս հարցի պատասխանն ուսուցիչը գտնում է՝ աշակերտների հետ վերհիշելով գրաբարյան այբուբենը: Ինչպես գիտենք, Մ. Մաշտոցը հայերենի յուրաքանչյուր հնչյունի համար ստեղծել է մեկ տառ, 36 հնչյունի դիմաց՝ 36 տառ: Եվ-ը երկու – երեք հնչյունների կապակցություն է՝ եվ (յեվ): Այն մեր այբուբենում առանձին տառ չի գիտակցվում և գրվում է եվ կամ և ձևով:

Արդի հայերենի ձայնավորների ուղղագրությունը և ուղղախոսությունն անցնելիս անհրաժեշտ է որոշակի տեղեկատվություն տալ գրաբարի ի, գ, ընդ, ըստ նախդիրների մասին՝ առանց դրանք անվանելու (դա թողնենք «Ձևաբանություն» բաժինն ուսումնասիրելիս), օգտագործելով «մասնիկներ» եզրույթը: Ինքնըստինքյան, խոչընդոտ, անընդմեջ, օրըստօրե, անընդհատ բառերում ը ձայնավորի գրությունը բացատրվում է ը-ով սկսվող ընդ, ըստ բաղադրիչներով, իսկ գիշերուզօր, ոսկեզօծ և նման բառերում օ-ի գրությունը՝ գ մասնիկից հետո օ-ով սկսվող բառարմատներով: (8)

Ի նախդրի մասին առաջին տեղեկատվությունը հարկավոր է տալ հօգուտ, հոտնկայս բառերի ուղղագրությունը բացատրելիս: Դրանց բառասկզբի հ-ն գրաբարի ի մասնիկն է, որը բառին միացած գրվելիս դառնում է հ, և դրանից հետո բառն ուղղագրությունը չի փոխում: Ի նախդրին անդրադառնալ է պետք նաև «Նամակի կառուցվածքը» ուսուցանելիս: (9) Ի պատասխան արտահայտության մեջ ի-ն նշանակում է որպես (որպես պատասխան), իսկ Ա. Կիրակոսյանի «Նամակ առ Հայաստան» բանաստեղծության մեջ (10) գրաբարյան առ մասնիկը հանգման, մատուցման իմաստ է արտահայտում՝ «Նամակ Հայաստանին»:

Էջմիածին, բամբասանք բառերի բառակազմությունը հուշում է դրանց գրությունն ու իմաստը: Այսպես. Էջմիածին բառի մեջ էջ-ը իջնել բայի արմատն է (11), որը գրաբարից թարգմանվում է իջավ, այսինքն՝ դա այն տեղն է ուր իջավ Միածինը: Ահա և դասագրքի նշված էջի 7-րդ վարժության բացատրությունը:

Բամբասանք բառն առաջացել է հին հայերենի բառ «ասում եմ», բաս «ասում ես» արմատների+ անք վերջածանց կաղապարով:(12)

Հին հայերենին ուղղակի անդրադարձ է «Ծնունդ Վահագնի» գողթան երգը:(13) Այս բանաստեղծության օրինակով աշակերտներին տեղեկություն է տրված գրաբարյան գ նախդրի, ոյ, եա երկբարբառների արտասանության մասին (զկարմրիկն – ըզկարմրիկըն, բոցոյն –բոցույն, խարտեաշ – խարտյաշ):

Գրաբարյան տեքստերի ընթերցանությունը, գրաբարից ժամանակակից հայերեն թարգմանությունները շարունակվում և առավել մեծ ծավալներ են ընդունում «Մայրենի 6» դասագրքում: Գրաբարը ներկայացվում է «Տերունական աղոթքով»(14), որը տրված է նախ՝ հին հայերենով, ապա՝ գրական արևելահայերենով: Գրաբարյան տեքստի ընթերցանության համար հուշումները 6-րդ դասարանում, բնականաբար, առավել շատ են. յերկինս – հերկինըս, յերկրի – հերկրի, յալիտեանս – հավիտյանըս, զհաց – ըզհաց, զպարտիս – ըզպարտիս, փորձութիւն – փորձություն, արքայութիւն –արքայություն, զօրութիւն –զօրություն: Այս հուշումները և թարգմանությունը, ինչպես նաև այդ աղոթքի հաճախակի կրկնությունը կօգնեն, որ աշակերտներն արագ յուրացնեն գրաբարյան տեքստը: Ուսուցիչը պետք է բացատրի, որ չնայած հին հայերենը գրաբար է դարձել, նրանով չենք հաղորդակցվում, բայց չի մոռացված: Այն լսում և օգտագործում ենք ամեն օր: Գրաբարը մեր հոգևոր պաշտամունքի լեզուն է, Աստծո հետ հաղորդակցվելու լեզուն:

Գողթան երգերից շատ անդրադարձներ կան «Մայրենի 6»-ում՝ «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Արտաշես և Սաթենիկ»: Սրանցից յուրաքանչյուրի մասին խոսելիս հատուկ պետք է նշել ու կրկնել, որ դրանք մեր նախնիները ստեղծել են հին հայերենով, ժամանակի ընթացքում մի մասը ոչնչացվել է, առանձին հատվածներ մեզ են հասել Մ. Խորենացու շնորհիվ: Այս առասպելներից յուրաքանչյուրն ուսուցանելիս սյուժեի մեկնաբանության, հայրենասիրության, ազգային արժանապատվության ու հպարտության վեհ զգացումներ դաստիարակելուն զուգընթաց անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել գրաբարյան կազմությունների մեկնաբանությանն ու ստուգաբանությանը: Այսպես, «Հայկ

և Բել» ավանդավեպի միջոցով պետք է տեղեկություն տալ Հայք և Հայոց ծոր կազմությունների մասին. Հայք-ը հայ բառի հոգնակին է, նշանակում է հայեր, Հայոց ծոր՝ հայերի ծոր, հայոց լեզու՝ հայերի լեզու: Այդպես էլ թագավորաց – թագավորների, երգ երգոց՝ երգերի երգ, օրիորդաց՝ օրիորդների, ականաց՝ ականների: Բառավերջին ք-ն հին հայերենում հոգնակիակերտ մասնիկ է: Ժամանակակից հայերենում այն վերածվել է վերջածանցի՝ գիրք, քայլք, աղոթք, անցք, ասք, միտք: (15) Ժամանակակից հայերենում ածանցների են վերածվել նաև գրաբարյան ց, ընդ նախդիրները: Դա ուղղություն կտա աշակերտներին դասագրքի 131-րդ էջի 5-րդ վարժությունը կատարելիս:

5-րդ դասարանում արդեն խոսվել է գրաբարյան համը յ-ի մասին: 6-րդ դասարանում դրան անդրադառնում ենք «Արա Գեղեցիկ և Շամիրամ» ավանդավեպից մեզ հասած «Ուլունք Շամիրամայ ի ծով» նախադասությունը մեկնաբանելիս: (16) Աշակերտների հետ վերհիշում ենք նաև գրաբարյան ի նախդրի իմաստը, որին աշակերտները ծանոթ են նախորդ դասարանից:

Գողթան երգերից «Մայրենի 6»-ում առավել ընդարձակ ներկայացված է «Արտաշես և Սաթենիկ» ավանդավեպը: (17) Մեջբերումները, սակայն, տրված են ժամանակակից հայերենով՝ «Եվ որտեղի՞ց քաջ Արտաշեսը պիտի տա...», «Հեծավ արի Արտաշես արքան...», «Ոսկի անձրև էր տեղում...»: Քանի որ աշակերտներն արդեն ծանոթ են նման գրույցների գրաբար և ժամանակակից հայերեն զուգահեռ տարբերակներին, լավ կլինի, որ ուսուցիչը լրացուցիչ տեղեկություններ տա այդ ավանդավեպի գրաբար տեքստի մասին. կարող կամ անգիր արտասանի վերը նշված հատվածները, բացատրի ուստան, ականներ, շիկափոկ, փանդիռ գրաբարյան բառերը: Ծանոթությունը գրաբար տեքստին՝ կօգնի այդ բառերն ըմբռնելուն և մտապահելուն:

Հանրակրթական դպրոցի 7-8-րդ դասարաններում հայոց լեզուն ուսուցանվում է առանձին դասագրքերով: Ժամանակակից հայերենի քերականությանը զուգընթաց շարունակենք մեկնաբանել հին հայերենի լեզվական համարժեք իրողությունները:

Հայեցի կրթությունը գրական արևելահայերենի իմացությունը չէ սոսկ, այլև հայի ազգային արժանապատվության, մայր լեզվի նկատմամբ հպարտության, խորին հարգանքի և մեծ սիրո դաստիարակությունը: Ինչո՞ւ ենք հպարտանում, որ մեր լեզուն հազարամյակների պատմություն ունի: Չէ ո՞ր լեզուն հաղորդակցման միջոց է: Մարդիկ հաղորդակցվում են մի քանի դարերի պատմություն ունեցող լեզուներով անգամ և կարողանում են իրար հասկանալ: Ինչո՞վ է առանձնանում հայերենը: Այս հարցերի պատասխանը աշակերտները պետք է ուսանեն հին հայերենին առնչակցվելու ուղիով: Մեր լեզուն հին է, զարգացած, այնքան ու այնպես, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանությունն ամենահինն է աշխարհում, ամենահինն ու կատարյալը, այնպես, որ այն ընդունում են որպես բնագիր և թարգմանում հայերենից այլ լեզուներ: Ոսկեդենիկ հայերենի ամբողջ բառապաշարը հավաքված է Հայկազյան բառարաններում, «թրի նման փայլեցված է» Նարեկացու Մատյանի մեջ: Հին հայերենն Արցախյան շարժման նահատակների հարգանքի խորանի կարգախոսն է դարձել. «Մահ իմացեալ մահ է, մահ ոչ իմացեալ անմահութիւն է»: Տարիների հետ հարստացել է մեր բառապաշարը, հղկվել, դարձել բազմաշերտ: Ամեն մի ժամանակաշրջան, իրողություն, դարակազմիկ իրադարձություն իրենց հետ բերել են նոր բառեր, կապակցություններ, արտահայտություններ: Երկարակյաց լեզուն դրանցից միայն չափել է:

Հանրակրթական դպրոցի 7-8-րդ դասարաններում հայերենի խոսքի մասերն ուսումնասիրելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել վերջիններիս տարածքությամբ, խոսքիմասային փոխանցումներին: Եթե խոսվում է քերականական ձևերից առաջացած մակբայների, կապերի, շաղկապների, վերաբերականների և

այլնի մասին, պետք է առանձնակի ներկայացնել զրաբարյան քարացած ձևերը. բայ, գրեթե, հասցե, կեցցե, համարյա, առթիվ, շնորհիվ, երիցս, հագիվ, բարև, ցտեսություն, ցմահ, պատահմամբ և այլն:

Անվիճելի է, որ «կրթությունը մեր երկրի համար ռազմավարական խնդիր է, ազգային անվտանգության խնդիր»:(18) Մայրենի լեզվի խոր իմացությունը պարտադիր է այդ հարցում. ծառն արմատներով է կանգուն, տարիների հետ այն իր արմատներն ամուր կերի հողում, կղիմակայի ցրտին ու տապին, եթե խնամվում է: Մեր մայրենի լեզուն էլ կկարողանա դիմակայել ժամանակաշրջանի մարտահրավերներին, եթե մեզնից յուրաքանչյուրը լավ տիրապետի հայոց լեզվին, կարողանա այն պաշտպանել ոչ միայն օտարներից, այլև բոլոր այն վայ հայերից, ովքեր չգնահատելով մեր ազգային այդ մեծագույն արժեքը, աղավաղում են այն, սովորում կիսատ-պռատ, հեշտությամբ փոխարինում օտար լեզվով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս. Գ., Մեր լեզուն և մեր դպրոցը, Երզ, 2001, էջ 37:
2. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի. հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Էդիթ Պրինտ, 2011, էջ 4:
3. Բաբայան Օ., Գրաբարի ձեռնարկ, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2010, էջ 5:
4. Տե՛ս նշված ձեռնարկի 6-րդ էջը. «3 տառը բառասկզբում արտասանվում է հ... Ի նախդիրը ձայնավորով սկսվող բառից առաջ դառնում է յ և գրվում բառի հետ միասին՝ ի անապատի > յանապատի, ի օդ > հողս, ի օգուտ > յօգուտ, ի ուրախություն > յուրախություն, ի անձինս > յանձինս>>:
5. Տե՛ս Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի. հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք, Էդիթ Պրինտ, 2011, էջ 48:
6. Տե՛ս նշված դասագիրք, էջ 104:
7. Տե՛ս նշված դասագիրք, էջ 128:
8. Տե՛ս նշված դասագիրք, էջ 42:
9. Տե՛ս նշված դասագիրք, էջ 201:
10. Տե՛ս նշված դասագիրք, էջ 214:
11. Տե՛ս նշված դասագիրք, էջ 30:
12. Տե՛ս նշված դասագիրք, էջ 102:
13. Տե՛ս նշված դասագիրք, էջ 166:
14. Տե՛ս Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի. հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, Էդիթ Պրինտ, 2012, էջ 36:
15. Տե՛ս նշված դասագիրք, էջ 140:
16. Տե՛ս նշված դասագիրք, էջ 100:
17. Տե՛ս նշված դասագիրք, էջ 134:
18. Աբրահամյան Ս. Գ., Մեր լեզուն և մեր դպրոցը, Երզ, 2001, էջ 38:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՄԱՅՐԵՆԻՆ ՆԱԵՎ ԳՐԱԲԱՐՆ Է

ԿԱՐԻՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս, ո՞ւր ենք գնում և ինչո՞ւ հարցերի պատասխանը նախ և առաջ պետք է փնտրել իհն հայերենի ուսումնասիրության մեջ: Հոդվածում խոսվում է հանրակրթական դպրոցի աշակերտներին ժամանակակից հայոց լեզվի դասավանդմանը զուգահեռ զրաբարի մասին անհրաժեշտ տե-

դեկորյուններ տալու կարևորության մասին: Նշվում են հին հայերենի ուսուցման ռազմավարական նշանակությունը, 5–8–րդ դասարանների մայրենիի դասագրքերում ընդգրկված գրաբարյան տեքստերի հնչյունաբանական, բառակազմական, քերականական վերլուծությունների մի շարք միջոցներ ու եղանակներ:

РЕЗЮМЕ

РОДНОЙ ЯЗЫК – ТАКЖЕ И ГРАБАР

КАРИНЕ АВАНЕСЯН

Ключевые слова: Арцахское движение, родной язык, грабар, фонетика, алфавит, лексикология, морфология, песни Гохтана, обучение, стратегия обучения.

Кто мы? Откуда пришли? Куда идем? И почему? Ответы на эти вопросы прежде всего нужно искать в изучении древнеармянского языка. В статье говорится о важности, параллельно с обучением современному армянскому языку, предоставления необходимых знаний о грабаре в общеобразовательных школах. Отмечается стратегическое значение обучения древнему армянскому языку, приводится ряд способов и методов фонетических, словообразующих, грамматических анализов в текстах на грабаре в учебниках родного языка 5-8 классов.

SUMMARY

GRABAR (OLD ARMENIAN) IS ALSO A NATIVE LANGUAGE

KARINE AVANESYAN

Key words: Artsakh movement, native language, grabar, phonetics, alphabet, lexicology, morphology, songs of Goghthn, teaching, strategies of teaching.

Who are we? Where did we come from? Where are we going to? And why? Answers of these questions we must search in learning old Armenian. The article considers the importance of acknowledging the pupils about old Armenian in public schools in parallel with teaching literary Armenian. It mentions about strategic value of teaching old Armenian, kinds and methods of phonetic, word-forming, grammatical analyses in texts of Armenian textbooks of the 5th -8th forms.